

տաթեամբ լերջացնէին, նրանք հարկաւորութիւն չէին ունենալ դիմել Թոփալին, ուրեմն իրանց անքաղտութեան գլխաւոր պատճառը իրանք են»։ Հեղինակը և ցոյց է տալիս ալիսի մտածողներին մէկին՝ Մարգարին. «իմ մեղքս, իմ ազահութիւնս էր պատճառը, ասում էր նա»... և զգալով, որ կարող են Մարգարի նման ընթերցողներ լինել, ինքը հեղինակը իւր կողմից ասում է. «քեզ Թոփալ Ակոն կողոպտեց, քեզ վախառուն բռնաւորեց»։ Ալիսի Թիւրիմացութիւններին առնելու համար, հարկ էր Թոփալի գործունէութիւնը զտել ալիսի խառնուրդից, հարկ էր ներկայացնել ալիսի հանգամանքներ, երբ դատ ունեցողները բարեխղճաբար համոզւած լինելով իրանց իրաւունքների արդարութեան մասին, ստիպւած են զիմել Թոփալի միջոցով դատարանին. Այն ժամանակ պարզ կը լինէր, թէ որ կողմում պէտք է համարել մեղքի ծանրութիւնը։

Մի երկրորդ նկատութիւն ևս. Վեղծ կլասիկները նկարագրելով մի բարոյական հրէշ, ներկայացնում էին հրէշ նրան և ֆիզիքական կողմից. նոյնն է անում և

պր. փափաղեանը. ահա ինչ գծերով է նա ներկայացնում իւր հերոսին. «նորա անունը Թոփալ էր, որովհետև կաղ էր և ոչ միայն մի ոտքով՝ ալ երկու. դորա համար իսկ, երբ ման էր գալիս, նմանում էր մի փքւած բաղիւ կարճահասակ էր, մինչև իսկ թզուկ, խորշոմապատ պղնձադոյն դէմք, փոքր խոր ընկած շարժուն բերրով աչքեր, հաստ չիթուք, հաստ ընչացք, գերծած ծնօտ, կոշտ կարճ մատներով ձեռքեր» (11 եր.)։ Նոյնպէս նկարագրում է և Վանի փառաքանների ամբողջ դասակարգը. Վանը «ուճի մի դաս անվկալական կաղ, կոշտ և երբեմն իսկ թոթովախօս իրաւաբաններ» (1 երես)։ Ասկայն ալիսի ձևեր ցանկալի չեն մի ղուտ լէալական գրւածքի մէջ, որովհետև դրանք արհեստականութեան ոտուր են զցում գրւածքի վերալ, դրանով թուլացնելով տպաւորութիւնը։

Առաջ բերած թերութիւնները սակայն չեն ոչնչացնում զրօշկի գլխաւոր արժանաւորութիւնը, և մենք խորհուրդ են տալիս մեր ընթերցողներին կարդալ ալը գրւածքը։

B.

ՂԱՋԱՐԵԱՆՑ, ՅԱԿՈԲ.—ԵԳԻՒԼԷՅՈՒՆ. Մի արկած քիւրդերի կեանքից, Թիֆլիս, 1890 թ. տպար. «Արօր», նազարեանցի. 60 երես, գինն է 15 կոպէկ։ Հրատարակութիւն «Աղբիւր» և «Տարազ» պատկերազարդ հանդէսների։

Հեղինակը լաւ ծանօթ է երևում քրդերի կեանքին, նա տալիս է նոցա կենցաղավարութեան մասին մի քանի

հետաքրքրական տեղեկութիւններ. Գրւածքը իւր մէջ պարունակում է մի վէպիկի համար հարկաւոր նիւթեր։

Չը նախելով նիւթի չարմարութեան և հեղինակի լաւ ծանօթ լինելուն ալն կեանքին, որ նկարագրում է, ինքը վէպիկը, իբրեւ հեղինակութիւն, անկատար է և միայն մասամբ չաջողած:

Գիւլէն սրտոտ քրդուհի է, որ իւր նշանածին կորցնելուց չետու, վճռում է նորա վրէժը առնել նորան սպանողներէց և իսկապէս առնում էլ է, կատարելով համարձակ արշաւանք թշնամիների վրանը և դնդակահարանելով գլխաւոր թշնամուն: Պատմութեան բարոյականը ալն է՝ թէ մարդիկ պէտք է իրանց պատիւը կարողանան պաշտպանել, չը վախենան և երբեք ստրկաբար չը տանեն վիրաւորանքներ:

Հեղինակը իւր դրածքին առանձին անուն չի տւել. ալ անուանել է նորան «մի արկած քիւրդերի կեանքից»: Անշուտ է մնում ընթերցողի համար թէ ի՞նչ է դա, եղած դէպք, թէ տիպական մի նկարագրութիւն:

Եթէ դա իսկապէս տեղի ունե-

ցած մի անցք է, ալն ժամանակ հեղինակը պէտք է և բոլոր գրածքին տար ճշգրիտ պատմութեան կերպարանք: Եթէ դա՞մի տեսակ ստեղծագործութիւն է, հիմնւած քրդական կեանքի ծանօթութեան վերալ, ալն ժամանակ պէտք է վիպական ձևը լաւ պահպանւած լինէր և վէպի դանազան մասերը համաչափութեան բերած լինէին:

Հեղինակը դժւարացել է օգուտ քաղելու իւր նիւթից. նա իւր տեղեկութիւնները մոցրել է գրածքի զանազան խորշերը ոչ ցանկալի հմտութեամբ և փոխանակ ճոխացնելու պատմածքը՝ բռնաւորել է նորան և դարձրել ծանր ընթերցանելի:

Պատմածքի երկրորդ կէտը, սկսած վեցերորդ գլխից, աւելի չաջող է և կարդացում է համեմատաբար բաւականին հեշտութեամբ, իսկ մի քանի տեսարանները և հաճութեամբ:

Իբրեւ ժողովրդական դիրք՝ նա կարող է ընթերցողներ գտնել:

Քլ.

«ԱԶՕ-ՄԱՐՈՒՆ»։ Ս. Պետերբուրգ, տպարան Սկորոխոգովի. 1890 թ.,
փոքրադիր 22 երես. գինն է 3 կոպէկ:

Գրքովի նիւթը հետաքրքրական է, իսկ նորա բովանդակութիւնը ժողովրդական ընթերցանութեան համար նպատակաւոր մար: Դրածքը սակալն կիսակատար է մշակւած և կրում է մի քանի տեղերում թույլ մտածմունքի կնիք իւր վերալ:

Նիւթը առնւած է Ջուլամբերիկցի

ասորիների կեանքից, որոնք չալտնի են իբրեւ քաջ և ազատասէր ժողովուրդ: Այդ ասորիները կայողացել են իրանց լեռներում պահպանել իրանց ժողովրդական իրաւունքները: Այդ ասորիների և թուրքերի մէջ տեղի ունեցած մի մեծ ընդհանրամի նկարագրութիւնը կազմում է գրքովի